Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Տավուշի մարզի <<Վազաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ), աշխարհագրության (10 դասաժամ), անգլերենի (25 դասաժամ), հայոց լեզվի (12 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում(ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրահույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաշի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակից կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սեպտեմբերի 13-ից սեպտեմբերի 27-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 29-ին՝ ժամը 14:00-ին, ՀՀ Տավուշի մարզի Վազաշենի միջնակարգ դպրոցում, հասցեն գ. Վազաշեն, փ. 13, շ. 8:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 32-75-20 հեռախոսահամարով: